ԳՆՈՒՄՆԵՐԻ ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

Ք. Երևան 12.12.2016թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի

թիվ 117/16

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի (այսուհետ նաև՝ Խորհուրդ) բողոքը քննող հանձնաժողովը՝ գործելով Խորհրդի անունից, քննելով «Ֆոտոն» ՍՊԸ-ի 23.11.2016թ. ներկայացրած բողոքը (այսուհետ նաև՝ ԳԲԽ-117/16 բողոք) և կից փաստաթղթերը, «ԵՔ-ՇՀԱՊՁԲ-17/1» ծածկագրով բանակցային ընթացակարգի հրավերը և ԳԲԽ-117/16 բողոքի վերաբերյալ «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի 09.12.2016թ. ներկայացրած եզրակացությունը, պարզեց հետևյալը.

1. «Ֆոտոն» ՍՊԸ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը

«Ֆոտոն» ՍՊԸ-ն (այսուհետ նաև՝ Ընկերություն) 23.11.2016թ. ներկայացրած բողոքով հայտնել է, որ Ընկերությունը մասնակցել է Երևանի քաղաքապետարանի (այսուհետ նաև՝ Պատվիրատու) կարիքների համար «ԵՔ-ՇՀԱՊՁԲ-17/1» ծածկագրով շրջանակային համաձայնագրի միջոցով ընթացակարգին (սննդի փաթեթի ձեռքբերում) և ըստ «ԵՔ-ՇՀԱՊՁԲ-17/1» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովի թիվ 3 արձանագրության՝ զբաղեցրել է երրորդ տեղը, իսկ առաջին տեղը զբաղեցրել է «Նորք 7» ՍՊԸ-ն և «ՎԻ ԷՄ ՋԻ և որդիներ» ՍՊԸ-ն (կոնսորցիում): Ընկերությունը գրությունով գնահատող հանձնաժողովին հայտնել է, որ «Նորք 7» ՍՊԸ-ի կողմից ներկայացված

գնային առաջարկի 20 տոկոսի մասին հավաստող շուրջ 46 մլն նմանատիպ պայմանագիրը **շինծու** է հետևյալ հիմնավորմամբ. պայմանագրի մյուս կողմ հանդիսացող «Հ.Ս.Լ.Եղբայրներ» ՍՊԸ-ն չէր կարող հացաթխման գործունեություն ծավալող «Նորք 7» ՍՊԸ-ից ձեռք բերել կաթնամթերք, ջրեղեն, երշիկեղեն և այլ նմանատիպ մթերքներ, այն էլ շուկայականից անհամեմատ թանկ գներով:

Բողոքով նշվել է նաև, որ ՀՀ ֆինանսների նախարարի N 667-Ն հրամանով հաստատված և www.gnumner.am ինտերնետային կայքում զետեղված հրավերների օրինակելի ձևերի մեջ առկա է պայմանագրի նախագծի օրինակելի տիպային ձևը, որտեղ 2013թ. հետո կատարվել են փոփոխություններ՝ Ընկերությունը կարծում է, որ «Նորք 7» ՍՊԸ-ի և «Հ.Ս.Լ. Եղբայրներ» ՍՊԸ-ի միջև պայմանագիրը կնքվել է 2015-2016թթ հաստատված տիպային ձևին համապատասխան, սակայն պայմանագրի ամսաթիվ է նշված 15.01.2013թ.: Վերոհիշյալը նույնպես, ըստ «Ֆոտոն» ՍՊԸ-ի, հավաստում է, որ «Նորք 7» ՍՊԸ-ի և «Հ.Ս.Լ. Եղբայրներ» ՍՊԸ-ի միջև կնքված պայմանագիրը շինծու է:

Ընկերությունը խնդրել է «Նորք 7» ՍՊԸ-ից պահանջել «Հ.Ս.Լ.Եղբայրներ» ՍՊԸ-ին մատակարարած ապրանքների հաշիվ-ապրանքագրերը և հանձնաժողովը կհամոզվի ընկերության խորը կասկածների իրավացիության մեջ:

Ընկերությունը, մեջբերելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասը, 31-րդ հոդվածի 1-ին մասը, 45-րդ հոդվածի 1-ին և 3-րդ մասերը, ՀՀ կառավարության 10.02.2011թ. թիվ 168-Ն որոշման 65-րդ կետի 1-ին, 3-րդ և 4-րդ ենթակետերը, «Նորք 7» ՍՊԸ-ի և «Հ.Ս.Լ. Եղբայրներ» ՍՊԸ-ի միջև կնքված պայմանագրի 6.2 և 9.5 կետերը՝ նշել է,որ այս ամենը փաստում է «Նորք 7» ՍՊԸ-ի և «ՎԻ ԷՄ ՋԻ և որդիներ» ՍՊԸ-ի (կոնսորցիում) ներկայացված հայտի մասնագիտական փորձառության մասին հավելվածով հայտարարության կեղծ լինելու մասին:

Ելնելով վերոգրյալից Ընկերությունը խնդրել է՝

- մերժել «ԵՔ-ՇՀԱՊՁԲ-17/1» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնման ընթացակարգի «Նորք 7» ՍՊԸ-ի և «ՎԻ ԷՄ ՋԻ և որդիներ» ՍՊԸ-ի (կոնսորցիում) ներկայացված հայտը,
- մերժել 01.11.2016թ. թիվ 3 արձանագրությամբ կայացված որոշումը՝ «ԵՔ-ՇՀԱՊՁԲ-17/1» ծածկագրով ընթացակարգի արդյունքում «Նորք 7» ՍՊԸ-ի և «ՎԻ ԷՄ ՋԻ և որդիներ» ՍՊԸ-ի (կոնսորցիում) հաղթող ճանաչելու մասին որոշումները:

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ում 01.12.2016թ. ժամը 17:30-ին ԳԲԽ-117/16 բողոքի շրջանակներում տեղի ունեցած քննարկման ժամանակ «Ֆոտոն» ՍՊԸ-ի ներկայացուցիչը պնդել է բողոքով ներկայացրած դիրքորոշումը:

Խորհրդի նախագահի այն հարցին, թե Ընկերությունը նկատի է ունեցել, որ պայմանագիրը շինծու է, թե կեղծ, քանզի բողոքով ներկայացվել է, որ պայմանագիրը շինծու է, ապա ներկայացուցիչը պատասխանեց, որ նկատի է ունեցվել, որ պայմանագիրը կեղծ է, այսինքն «Նորք 7» ՍՊԸ-ն չունի նախկինում կատարված նմանատիպ համանման պայմանագրեր, իսկ Ընկերության կողմից ներկայացված պայմանագիրը չի համապատասխանում իրականությանը:

Խորհրդի այն հարցին, թե արդյոք Ընկերությունը կարող է ներկայացնել վիճարկվող պայմանագիրը կեղծ լինելը հավաստող հիմնավոր ապացույցներ, Ընկերության ներկայացուցիչը հայտնեց, որ այդ պահին նման ապացույցների չի տիրապետում:

Ելնելով վերոգրյալից՝ Խորհուրդը սահմանեց ժամկետ՝ մինչև 2016. դեկտեմբերի 9-ը, վիճարկվող պայմանագրի կեղծ լինելու փաստը հավաստող ապացույցներ ներկայացնելու համար:

2. Երևանի քաղաքապետարանի կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված փաստերը, հիմնավորումները և դիրքորոշումը

Երևանի քաղաքապետարանը՝ «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի 29.11.2016թ. ուղղարկված գրությանը ի պատասխան, 07.12.2016թ. թիվ 02/61-81850 գրությամբ պատասխանել է, որ Երևանի քաղաքապետարանի կողմից կազմակերպված «ԵՔ-ՇՀԱՊՁԲ-17/1» ծածկագրով գնման ընթացակարգի շրջանակներում «Նորք 7» ՍՊԸ-ն և «Վի Էմ Ջի և Որդիներ» ԲԲԸ-ն /կոնսորցիում/ գնահատող հանձնաժողովի որոշմամբ ճանաչվել է ընտրված մասնակից:

Ընկերությունների կողմից ներկայացվել է որակավորման փաստաթղթերը,որոնցում գնահատող հանձնաժողովը հրավերի պահանջների նկատմամբ անհամապատասխանություն չի արձանագրել:

Երևանի քաղաքապետարանը, պատշաճ ծանուցված լինելով «Գնումների աջակցման

կենտրոն» ՊՈԱԿ-ում 01.12.2016թ. ժամը 17:30-ին նշանակված նիստի օրվա, տեղի և ժամի մասին, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

3. ԳԲԽ-117/16 բողոքի վերաբերյալ «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի դիրքորոշումը

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ը Խորհրդին է ներկայացրել իր 09.12.2016թ. եզրակացությունը և առաջարկել է «Ֆոտոն» ՍՊԸ-ի 23.11.2016թ. ներկայացրած բողոքը մերժել:

4. ԳԲԽ-117/16 բողոքի վերաբերյալ էական նշանակություն ունեցող փաստերը

ԳԲԽ-117/16 բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1. Երևանի քաղաքապետարանի կարիքների համար ապրանքատեսակի գնման նպատակով կազմակերպված «ԵՔ-ՇՀԱՊՁԲ-17/1» ծածկագրով ընթացակարգի հրավերին էլեկտրոնային համակարգով /armeps.am/ հայտեր են ներկայացրել «Նորք 7» ՍՊԸ-ն և «ՎԻ ԷՄ ՋԻ և որդիներ» ՍՊԸ-ն (կոնսորցիումը), «ԴԵԱԳԱ» ՍՊԸ-ն, Ա/Ձ Հրայր Մանուկյանը և «Ֆոտոն» ՍՊԸ-ն:

2. ԵՔ-ՇՀԱՊՁԲ-17/1» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգի գնահատող հանձնաժողովը (այսուհետ նաև՝ Գնահատող հանձնաժողով) 01.11.2016թ. կայացած նիստի թիվ 3 արձանագրության 1.5 կետով առաջին տեղ զբաղեցնող մասնակից է ճանաչել «Նորք 7» ՍՊԸ-ին և «ՎԻ ԷՄ ՋԻ և որդիներ» ՍՊԸ-ին (կոնսորցիումը), իսկ 3-րդ տեղ զբաղեցրած մասնակից՝ «Ֆոտոն» ՍՊԸ-ին:

3. Գնահատող հանձնաժողովը, ղեկավարվելով Կարգի 47-րդ կետի 2-րդ ենթակետով, 01.11.2016թ. կայացած նիստի թիվ 3 արձանագրության 1.6 կետով որոշել է առաջին տեղ զբաղեցրած մասնակցին ծանուցել որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթեր ներկայացնելու համար:

4. «Նորք 7» ՍՊԸ-ն և «ՎԻ ԷՄ ՋԻ և որդիներ» ՍՊԸ-ն (կոնսորցիումը) որպես պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարման համար հրավերով պահանջվող մասնագիտական փորձառություն ներկայացրել են «Նորք 7» ՍՊԸ-ի և «Հ.Ս.Լ.Եղբայրներ» ՍՊԸ-ի միջև 15.01.2013թ. կնքված ապրանքների մատակարարման գնման պայմանագիր՝ ընդհանուր 46 021 850 ՀՀ դրամ գումարով:

5. Գնահատող հանձնաժողովի թիվ 4 արձանագրության 3-րդ կետի համաձայն՝ մասնակցի կողմից ներկայացրած որակավորման պահանջներին իրենց համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերում անհամապատասխանություններ չեն հայտնաբերվել, իսկ 6-րդ կետի համաձայն՝ հաղթող մասնակից է ճանաչվել «Նորք 7» ՍՊԸ-ին և «ՎԻ ԷՄ ՋԻ և որդիներ» ՍՊԸ-ին (կոնսորցիում):

5. Խորհրդի հիմնավորումները և եզրահանգումը

«Գնումների աջակցման կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությունը, ուսումնասիրելով «Ֆոտոն» ՍՊԸ-ի 23.11.2016թ. ներկայացրած բողոքը և կից փաստաթղթերը, Երևանի քաղաքապետարանի «ԵՔ-ՇՀԱՊՁԲ-17/1» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգի հրավերը, «Գնումների մասին» ՀՀ օրենքը (այսուհետև նաև՝ Օրենք), ՀՀ կառավարության 10.02.2011թ. թիվ 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգը (այսուհետ նաև՝ Կարգ), գտնում է, որ «Ֆոտոն» ՍՊԸ-ի 23.11.2016թ. ներկայացրած բողոքը ենթակա է մերժման հետևյալ պատճառաբանությամբ.

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 306-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ կեղծ գործարքը, այսինքն՝ առերևույթ, առանց համապատասխան իրավական հետևանքներ առաջացնելու մտադրության կնքված գործարքը, առոչինչ է:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ շինծու գործարքը, այսինքն՝ մեկ այլ գործարքի քողարկման նպատակով կնքված գործարքը, առոչինչ է: Այդ գործարքի նկատմամբ, հաշվի առնելով դրա էությունը, կիրառվում են այն գործարքին վերաբերող կանոնները, որը կողմերն իրականում նկատի են ունեցել շինծու գործարքը կնքելիս:

«Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 86-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ իրավական ակտը մեկնաբանվում է դրանում պարունակվող բառերի և արտահայտությունների տառացի նշանակությամբ՝ հաշվի առնելով օրենքի պահանջները:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ նաև Օրենք) 5-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետի համաձայն՝ մասնակիցը պետք է բավարարի հրավերով սահմանված որակավորման չափանիշներին: Մասնակիցը պետք է ունենա պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարման համար հրավերով պահանջվող մասնագիտական փորձառություն:

Օրենքի 31-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

Նույն հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ առաջին և հաջորդաբար տեղերը զբաղեցրած մասնակիցներին որոշելուց հետո՝ հրավերով սահմանված ժամկետում՝

1) առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը հանձնաժողովին է ներկայացնում իր՝ գնումներին մասնակցելու իրավունքը և հրավերով նախատեսված որակավորման չափանիշներին համապատասխանությունը հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը (տեղեկությունները).

2) հանձնաժողովը գնահատում է սույն մասի 1-ին կետի համաձայն ներկայացված փաստաթղթերի (տեղեկությունների) համապատասխանությունը հրավերով սահմանված պահանջներին և հրավերով սահմանված դեպքերում ու կարգով, գնահատում է տվյալ մասնակցի գնային և ոչ գնային (տեխնիկական) առաջարկի հիմնավորվածությունը:

Նույն հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ հայտը գնահատվում է բավարար, եթե սույն հոդվածի 5-րդ մասի համաձայն ներկայացված տվյալները բավարարում են հրավերով սահմանված պահանջները: Նման դեպքում մասնակիցը հայտարարվում է ընտրված:

Կարգի 47-րդ կետի 2-րդ կետը սահմանում է, որ հայտերի բացման նիստի ավարտին հաջորդող աշխատանքային օրը հանձնաժողովի քարտուղարն էլեկտրոնային եղանակով՝ ծանուցում է առաջին տեղը զբաղեցրած մասնակցին՝ առաջարկելով երեք աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը, իսկ ապրանքների գնման

դեպքում նաև նույն Կարգի 35-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերությամբ նախատեսված փաստաթուղթը: Նույն մասով սահմանված ժամկետում փաստաթղթերը չներկայացվելու դեպքում հանձնաժողովը մերժում է առաջին տեղը զբաղեցրած մասնակցի հայտը և փաստաթղթեր ներկայացնելու պահանջ է ներկայացնում հաջորդող տեղը զբաղեցրած մասնակցին:

Կարգի 65-րդ կետի առաջին ենթակետի համաձայն՝ մասնակիցների, օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետով նախատեսված՝ «Մասնագիտական փորձառություն» չափանիշը գնահատվում է հետևյալ կարգով՝

1) հրավերով պահանջվում է, որ մասնակիցը հայտով ներկայացնում է հայտարարություն, որ հայտը ներկայացնելու տարվա և դրան նախորդող երեք տարվա ընթացքում պատշաճ ձևով իրականացրել է համանման (նմանատիպ) առնվազն մեկ պայմանագիր: Նախկինում կատարված պայմանագիրը (կամ պայմանագրերը) գնահատվում է (կամ գնահատվում են) նմանատիպ, եթե դրա (դրանց) շրջանակներում մատակարարված ապրանքների, մատուցված ծառայությունների և կատարված աշխատանքների ծավալը (կամ հանրագումարային ծավալը)՝ գումարային արտահայտությամբ, պակաս չէ տվյալ գնման ընթացակարգի շրջանակներում մասնակցի ներկայացրած գնային առաջարկի հիսուն տոկոսից, որից առնվազն մեկ պայմանագրի շրջանակներում մատակարարված ապրանքների, մատուցված ծառայությունների և կատարված աշխատանքների ծավալը գումարային արտահայտությամբ, պակաս չէ տվյալ գնման ընթացակարգի շրջանակներում մասնակցի ներկայացրած գնային առաջարկի քսան տոկոսից.

Ներկայացրած բողոքով «Ֆոտոն» ՍՊԸ-ն հայտնել է, որ «Նորք 7» ՍՊԸ-ի կողմից ներկայացված գնային առաջարկի 20 տոկոսի մասին հավաստող շուրջ 46 մլն նմանատիպ պայմանագիրը **շինծու** է, քանզի վիճարկվող պայմանագրի մյուս կողմ հանդիսացող «Հ.Ս.Լ.Եղբայրներ» ՍՊԸ-ն չէր կարող հացաթխման գործունեություն ծավալող «Նորք 7» ՍՊԸ-ից ձեռք բերել կաթնամթերք, ջրեղեն, երշիկեղեն և այլ նմանատիպ մթերքներ, այն էլ շուկայականից անհամեմատ թանկ գներով:

Բացի այդ, բողոքով նշվել է, որ ՀՀ ֆինանսների նախարարի N 667-Ն հրամանով հաստատված և www.gnumner.am ինտերնետային կայքում զետեղված հրավերների օրինակելի ձևերի մեջ առկա է պայմանագրի նախագծի օրինակելի տիպային ձևը, որտեղ

2013թ. հետո կատարվել են փոփոխություններ՝ Ընկերությունը կարծում է, որ «Նորք 7» ՍՊԸ-ի և «Հ.Ս.Լ. Եղբայրներ» ՍՊԸ-ի միջև պայմանագիրը կնքվել է 2015-2016թթ հաստատված տիպային ձևին համապատասխան, սակայն պայմանագրի ամսաթիվ է նշված 15.01.2013թ.: Վերոհիշյալը նույնպես, ըստ «Ֆոտոն» ՍՊԸ-ի, հավաստում է, որ «Նորք 7» ՍՊԸ-ի և «Հ.Ս.Լ. Եղբայրներ» ՍՊԸ-ի միջև կնքված պայմանագիրը շինծու է:

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ում 01.12.2016թ. ժամը 17:30-ին ԳԲԽ-117/16 բողոքի շրջանակներում տեղի ունեցած քննարկման ժամանակ «Ֆոտոն» ՍՊԸ-ի ներկայացուցիչը հստակեցրել է, որ ներկայացված բողոքում նկատի է ունեցվել, որ վիճարկվող պայմանագիրը ոչ թե շինծու է, այլ կեղծ, այսինքն «Նորք 7» ՍՊԸ-ն չունի նախկինում կատարված նմանատիպ համանման պայմանագրեր, իսկ Ընկերության կողմից ներկայացված պայմանագիրը չի համապատասխանում իրականությանը:

Խորհրդի այն հարցին, թե արդյոք Ընկերությունը կարող է ներկայացնել վիճարկվող պայմանագիրը կեղծ լինելը հավաստող հիմնավոր ապացույցներ, Ընկերության ներկայացուցիչը հայտնեց, որ այդ պահին նման ապացույցների չի տիրապետում:

Ելնելով վերոգրյալից՝ Խորհուրդը սահմանեց ժամկետ՝ մինչև 2016. դեկտեմբերի 9-ը, վիճարկվող պայմանագրի կեղծ լինելու փաստը հավաստող ապացույցներ ներկայացնելու համար:

Խորհուրդը արձանագրում է, որ «Ֆոտոն» ՍՊԸ-ի կողմից այդպես էլ չներկայացվեցին վիճարկվող պայմանագրի կեղծ (շինծու) լինելու փաստը հավաստող որևէ ապացույց:

Ինչ վերաբերում են «Ֆոտոն» ՍՊԸ-ի կողմից պայմանագիրը կեղծ (շինծու) լինելու վերաբերյալ ներկայացրած պատճառաբանություններին, ապա Խորհուրդը հայտնում է, որ վերոհիշյալ փաստարկները չեն կարող համարվել բավարար վիճարկվող պայմանագիրը կեղծ (շինծու) դիտարկելու համար:

Միևնույն ժամանակ Խորհուրդը հայտնում է, որ ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդը օժտված չէ մասնակցի հայտը մերժելու իրավասությամբ:

Ելնելով վերոգրյալից և զեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 48-րդ հոդվածի 5-րդ մասով՝ ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդը՝

ՈՐՈՇԵՑ

«Նորք 7» ՍՊԸ-ի և «Վի Էմ Ջի և որդիներ» ՍՊԸ-ի /կոնսորցիումով/ հայտը մերժելու վերաբերյալ պահանջով և «ԵՔ-ՇՀԱՊՁԲ-17/1» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 01.11.2016թ. թիվ 3 արձանագրությամբ Նորք 7» ՍՊԸ-ի և «Վի Էմ Ջի և որդիներ» ՍՊԸ-ի /կոնսորցիումով/ հաղթող ճանաչելու մասին որոշումները դադարեցնելու պահանջով, Ընկերության կողմից՝ Կենտրոնին 23.11.2016թ. ներկայացրաց բողոքը մերժել:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումն իրավապարտադիր է:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով:

Բողոքը քննող հանձնաժողով՝

Նախագահ՝ **Գոռ Գրիգորյան**

Անդամ՝ **Արմինե Նամալյան**